

պատուած լինելով լեռներով՝ ենթարկուած չէ մշտական և խիստ հողմերի, այլ ժամանակաւոր թեթեւ քամիների: Անձրևներ լինում են գարնանը, մինչև լունիս ամիսը. լինում է ժամանակ, որ շրջակայ լեռներն օրերով ու շաբաթներով ծածկուած են լինում թանձր մշուշով կամ մէգով:

II.

Ս Ա Ն Ա Հ Ի Ն Գ Ի Ի Ղ Ը

Գիւղն այժմ ունի երեսուն տուն հայ բնակիչ՝ զանազան տեղերից եկած. կան նաև Արղութեանց իշխանական տոհմին պատկանող գիւղացի ընտանիքներ: Գիւղացիները պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և այգեգործութեամբ: Կալուածքը պատկանում է Արղութեանց երկայնաբազուկ իշխանական տոհմին և մասամբ էլ վանքին—վանքը ստանում է եկամտի եօթերորդ մասը: Գիւղացիները շատ քիչ հող ունենալով և այն էլ մի այգուհիի քարքարոտ տեղ, ստիպուած են մաքառել բնութեան ամեն տեսակ արհաւիրքների դէմ, պահպանելով իրենց գոյութիւնը հողից ստացուած չնչին արգիւնքով: Այգիներից շօշափելի արգիւնք չեն կարող ստանալ, որովհետև գտնուում են բաւականին հեռու, ձորի մէջ և ճանապարհ էլ չունին արտահանելու. այգիների թիւն էլ շատ սահմանափակ է՝ դարձեալ տեղ չլինելու պատճառով: Առհասարակ աղքատ կեանք են վարում և արգիւնարեբելու ոչինչ կամ շատ քիչ բան ունին: Մի բանով միայն սունահանեցիք յայտնի են ամբողջ Լօռում—այդ քնքոյշ սեռի ներկայացուցիչների արտաքին գեղեցկութիւնն է. կանանց տիպը համակրելի է, դէմքի գեղեցկութիւնը կանոնաւոր և համաչափ գծագրուած. այդ է պատճառն ահա, որ Սանահնեցոց մականունը Լօռում յայտնի է իբրև «հարսնասիրուն սանահնեցիք»: Թէ կանայք և թէ տղամարդիկ՝ օգի և ջրի ազդեցութեան ներքոյ՝ Ֆիզիկապէս առողջ կազմուածք ունին, սակայն տգիտութեան

խաւարը դեռ ևս անթափանցելի է. դպրոց չունին: Նիւթա-
կան միջոցներից զուրկ և հազիւ իրենց կենսական պիտույք-
ները հոգացող գիւղացիներին հարկաւ այնքան էլ չի կարելի
մեղադրել, որ չեն հասկանում ուսման նշանակութիւնը և
իրենց զուակներին թողնում իրենց պէս անկիրթ, բայց ինչ
ասենք այդ գիւղից սերուած և Թիֆլիզում փարթամ կեանք
վարող ու մեծ գիրք ունեցող Արղութեան Երկայնաբազուկ-
ներին, որ տարեկան միքանի հարիւր մանէթ ծախսելով՝
գոնէ միգասեան դպրոց չեն պահել իրենց հայրենի օջաղում:
Ինչ ասենք մեր հոգևոր վարչութեանը, որ մի վանական
դպրոց անգամ չի պահում այնտեղ, ուր երբեմն ճեմա-
րանն-ներ են եղել և աստուածաբանութեան նշանաւոր ու-
ժեր դասախօսել...

III.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏՆՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գուգարաց աշխարհի մասին շատ բան չենք գտնում
մեր գաստիկան մատենագրութեան մէջ. այս երկիրը սկզբում
լիջւում է իբրև Գուգարաց բզեշխութիւն և ապա իբրև
Բագրատունեաց իշխանական կայուածք. լիջւում է նաև
որպէս հանգստարան կամ գերեզմանատուն Բագրատունի
թագաւորների:

Աշոտ-Ողորմած Բագրատունի արքայի անդրանիկ որդի
Սմբատն երբ ժառանգում է Բագրատունեաց հարստութեան
զահը՝ Անին, նրա երկրորդ որդի Աբասը ըմբոստանալով իր
հօր և եղբոր դէմ՝ կազմում է Կարուց անկախ թագաւորու-
թիւնը: Որպէս զի կրտսեր որդի Գուրգէնն էլ իր եղբոր պէս
ըմբոստանալով խռովութիւններ չյարուցանէ, Աշոտ-Ողորմածը
տալիս է նրան Գուգարաց աշխարհը, ուր նա մնում է իբրև
անկախ իշխան և մեռնելուց յետոյ թաղւում Սանահնի վան-
քում, Սուրբ Աստուածածնայ եկեղեցու երևելեան որմի տակ-